

## **Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջնության աջակցության ծրագիր**

Արցախի ներդրումային հիմնադրամը փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության պետական ծրագրի շրջանակում իրականացնում է փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջնության աջակցության ծրագիր:

Ծրագրի նպատակն է նպաստել ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ մրցունակության և ՓՄՁ սուբյեկտների հեղինակության բարձրացմանը, ինչպես նաև արտահանման ծավալների ավելացմանը:

### **Ծրագրի խնդիրներն են՝**

- տեղական և միջազգային շուկաներում ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ առաջնությանն աջակցելը,
- արտահանման զարգացման հիմնախնդիրների բացահայտումը,
- առևտրատնտեսական կապերի հաստատման, համատեղ արտադրություններ կազմակերպման հնարավորությունների բացահայտումը,
- արտերկրների գնորդների մասին արտահանողների իրազեկության բարձրացումը,
- տեղական արտադրանքի մասին արտերկրյա գնորդների իրազեկության բարձրացումը,
- տեղական արտադրանքի և արտադրողի շահերի պաշտպանությանն աջակցելը:

### **Ծրագրի շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝**

- ❖ արտահանումն աջակցող ՀՀ կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցության իրականացում,
- ❖ ԼՂՀ-ում, ՀՀ-ում, ինչպես նաև արտերկրներում ցուցահանդեսների, տոնավաճառների, համաժողովների և այլ միջոցառումների կազմակերպում, այդ թվում նաև նմանատիպ միջոցառումներ իրականացնող կազմակերպությունների միջնորդությամբ և համատեղ,
- ❖ ԼՂՀ, ՀՀ և արտերկրների միջև տնտեսական համագործակցության շրջանակներում միջազգային, տարածաշրջանային և տեղական ցուցահանդեսներին, տոնավաճառներին, համաժողովներին և այլ միջոցառումներին ԼՂՀ ՓՄՁ սուբյեկտների, շահագրգիռ պետական և այլ մարմինների ներկայացուցիչների մասնակցության ապահովում,
- ❖ արտահանման պոտենցիալ ունեցող տեղական արտադրողների գործունեության ուսումնասիրությունը, նրանց պահանջների բացահայտումը, ներդրումային ծրագրերին աջակցում,
- ❖ ՓՄՁ սուբյեկտների զարգացման համար մարքեթինգային ուսումնասիրությունների իրականացում,

- ❖ ՓՄՁ սուբյեկտների համար պոտենցիալ գործընկերների, առևտրային կազմակերպությունների բացահայտում և հետաքրքրությունների շրջանակների հստակեցումը, նրանց հետ համագործակցության կազմակերպում,
- ❖ արտահանման ծրագրերի մշակումը, իրականացումը և առաջարկությունների ձևավորում,
- ❖ ցուցահանդեսների, տոնավաճառների, համաժողովների և այլ միջոցառումների վերաբերյալ համապատասխան նյութերի պատրաստում, տպագրում և տրամադրում,
- ❖ տեղական արտադրողի և արտադրանքի պաշտպանությանն, ներմուծումը փոխարինող ապրանք արտադրող /ծառայություն մատուցող/ ՓՄՁ սուբյեկտների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ: